

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՆԹԱՇԵՐՏԸ ՀԱՅՎԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԱՐՅԱՆ

Տեղանունների ուսումնասիրության լեզվաբանական խնդիրներից մեկը աշխարհագրական տարբեր միավորների անվանումների բառային իմաստների բացահայտումն է: Տեղանվան իմաստի վերականգնումն առաջնային խնդիր է դառնում պատմագիտության համար և աշխարհագրության, որովհետև այս գիտակարգերի տեսանկյունից տեղանուններն արդեն տարածության և ժամանակի մեջ կողմնորոշվելու համար ստեղծված «դատարկ» նշաններ չեն, այլ ժողովուրդների բնակության սկզբնական վայրերի, երկրի տարածքի նախնական աշխարհագրական վիճակի մասին բնութագրիչ տեղեկություններ պարունակող վկայագրեր: Տեղանվանագիտության մեջ իբրև հիմնական տեղանվանահիմքեր առանձնացվում են աշխարհագրական միավորների անվանումները, բուսանունները, կենդանանունները, անձնանունները և ժողովրդանունները, վերջիններս հանգուցային դեր ունեն տեղանվանական ենթաշերտի բացահայտման առումով, ուստի մանրամասն դիտարկենք դրանք:

Տեղանունների կազմում ժողովրդանունների կիրառության հանդեպ գիտական հետաքրքրությունը եղել է մշտապես: Տեղանվանագիտության մեջ այս հիմքերից ածանցված կառույցներն ունեն հատուկ եզրույթներ՝ էթնոտեղանուններ և գենոնիմներ: Էթնոտեղանունն այնպիսի աշխարհագրական անվանում է, որի հիմքում որևէ էթնոսի, ժողովրդի, ցեղի անունն է: Վերջին տիպի տեղանունները հատկանվանագետ Ա. Սուպերանսկայան կոչում է գենոնիմ. դրանք ոչ թե էթնոսի, այլ գենի՝ զարմի անունից ծագած տեղանուններ են: Պատմաբանները և աշխարհագրագետները նման տեղանվանահիմքերը դիտում են որպես տվյալ տարածքում այս կամ այն ազգի նախնական բնակության կամ ժողովուրդների զաղթի տվյալ ճանապարհի ապացույց: Անվանադրման բանաձևում ուրույն դիրք ունի դյուցազնանունը (էպոնիմ). այս կերպ կոչում են այն իրական կամ առասպելական հերոսին՝ դյուցազնին, ի պատիվ որի կոչվել է որևէ աշխարհագրական միավոր՝ երկիր, լեռ, ծով, գետ, ինչպես նաև ժողովուրդ, ցեղ կամ ժամանակային հատված: Օրինակ՝ **Հայկը**, **Արմենը**, **Արան**, **Գեղամը** և նման այլ անձնանունները եղել են դյուցազնանուն-էպոնիմ, զուգընթաց վերածվել են տեղանվան:

Անձնանունները տեղանուն դառնալու մեծ ներուժ ունեն. հին շրջանում արքաների և իշխանների, հերոսների անուններով կոչվում էին ոչ միայն նրանց պատկանող, նրանց կողմից կառուցված կամ գրավված քաղաքներն ու ավանները, այլև նրանց ընծայված բնակավայրերը, որտեղ տարածվում, բազմապատկվում էր պաշտամունք դարձած նրանց փառքն ու հռչակը:

Պատմագիտության և լեզվաբանության մեջ իշխում է այն մոտեցումը, ըստ որի՝ ժողովրդանունները ծագում են անձնանուններից. այսինքն՝

պատմական որոշակի իրադարձություններից հետո (ռազմական հաղթանակներ, քաղաքական, տնտեսական-մշակութային նվաճումներ) տոհմի նահապետի անունով սկսում է կոչվել նրա ողջ զարմը: Մեր պատմագրության հայր Մովսես Խորենացին իր «Հայոց պատմությունը» կառուցել է հենց այս սկզբունքով և մեր ինքնանվանումը որպես ազգային միավոր՝ *հայ*, ինչպես նաև այլ ազգերի կողմից մեզ տրվող անվանումները՝ *արմեն*, *թորգոմյան*, *ասքանազյան* և այլն, բացատրում է մեր ազգի հերոս նախնիների անձնանունների միջոցով: Խորենացին ոչ միայն մեր ժողովրդանունների ծագումն է կապում դյուցազունների անունների հետ, այլև նշանավոր բոլոր տեղանունները բխեցնում է Հայկյան գարմի ժառանգների անուններից¹:

Քերթողահայր Խորենացուց հետո դարեր են անցել, սակայն տեղանվանագիտության մեջ դեռևս քննության խնդիր է, օրինակ, *Արմավիր կամ Արմաշ, Արմա, Հարմա* տեղանունները ծագում են մեր էթնիկական *արմե՞ն* անվանումից, որը ստուգաբանվում է որպես «արմ- արմատ, ցեղ, զարմ» կամ «ընձիւղ, ցողուն», «մեծ, ուժեղ, հզոր»², թե՞ մեր նախահայր *Արմենի* անձնանունից, որը մեծ հավանականությամբ կարող է առաջացած լինել հենց վերոնշյալ հասարակ գոյականներից կամ ածականներից, քանի որ դրանք կարող էին լինել անձի անվանադրման համար կարևոր բնութագրիչ մականուններ:

Հայ տեղանվանագիտության մեջ Նիկողայոս Ադոնցը, ապա Գրիգոր Ղափանցյանը տեղանունների և տեղանվանակերտ հիմքերի կամ մասնիկների քննությանը նվիրված աշխատանքներում հաճախ հնագույն տեղանունների հիմքում տեսնում են ժողովրդանուններ կամ ցեղանուններ՝ դրանց առաջացումը կապելով ժողովուրդների գաղթ-տեղաշարժերի հետ³: «Հին Հայաստանի տեղանունների պատմալեզվաբանական նշանակությունը» աշխատության մեջ Գր. Ղափանցյանն անդրադառնում է հայ նախարարական մի շարք տոհմանունների, որոնցից ծագում են բազմաթիվ բնականուններ և երկրանուններ՝ դրանք ստուգաբանելով որպես խեթական ցեղերի հնագույն անվանումներ: Նման ստուգաբանությունների որոշ մասն այսօր վիճարկվում է⁴, սակայն ընդհանուր կաղապարն իր կենսունակությունը պահպանում է ցայսօր, այսինքն՝ հայկական էթնոսի մեջ ծուլվող այլ ցեղային միավորների անվանումները սկզբնապես վերածվել են տոհմանունների, ապա՝ բնականունների, որովհետև այդ տոհմերը անվանվող գավառների կամ աշխարհների տերն էին ու հիմնադիրը: Գր. Ղափանցյանն ուրվագծում է տոհմացեղային գաղթի մի ողջ պատկեր Արածանիի հովտի ուղղությամբ տարբեր սեպագիր աղբյուրների հիման վրա⁵. *Սիւնի*, *Պալա/Բալա/Պաղա/Բաղա*, *Սիս*, *Շակ/ք*, *Տաւր*, որոնց անուններից առաջացել են *Սիւնիք*, *Ղարաբաղ*, *Սիսական-Սիսիան*, *Շակաշէն*, *Տարօն*,

¹ Տե՛ս **Մովսէս Խորենացի**, Հայոց պատմութիւն, Եր., 1981, էջ 48-52:

² **Գ. Զահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան, Եր., 1987, էջ 287-288:

³ Տե՛ս **Капанцян Гр.** Суффиксы и суффиклируемые элементы в топонимике древней Малой Азии. Ер., 1948, **Գ. Ղափանցյան**, Անտիպ գործեր // Восточная Малая Азия – генетический исток армянского Ара. Եր., 2008:

⁴ Տե՛ս **Արամ Զոսյան**, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր արձանագրությունների), Եր., 2004, ինչպես նաև՝ **Յովհաննէս Կարազեղեան**, Սեպագիր տեղանուններ, Եր., 1998:

⁵ Տե՛ս **Капанцян Гр.** Историко-лингвистическое значение топонимики Древней Армении. Ер., 1940, էջ 73-74:

Տուրուրերան (Tauribirani) և նույնարմատ այլ տեղանունները: Այսպիսով, տարբեր ցեղերի հայկականացումը, որը Ղափանցյանը կոչում է արմենականացում, սկսվել է Փոքր Հայքից (Haiaasa), ապա ընդգրկել Տարոնը՝ ներկայիս Դիարբեքիի ուղղությամբ, այնուհետև Վանա լճի շրջակայքը՝ Արածանիի հյուսիսային հոսանքով դեպի Բասեն, այնտեղից արևմուտք՝ Սպեր, այնուհետև հյուսիս՝ դեպի Այրարատ. «Բազմաթիվ նախահայկական (այսինքն՝ ն. ք. VII դարից վաղ) և՛ հայկական ցեղեր, և՛ տոհմեր կամ անհետ վերացել են, կամ էլ ավանդել են իրենց անունները աշխարհագրական տարածքներին և վայրերին, ինչպես նաև իշխանական և նախարարական տոհմերին»⁶: Ընդ որում՝ ժողովրդանուն տեղանվանակերտ հիմքով կազմվում են ոչ միայն երկրանուններ կամ բնականուններ, այլև ֆիզիկաաշխարհագրական միավորների անուններ՝ ջրանուններ, լեռնանուններ. վերջիններս հաճախ հնության ավելի մեծ աստիճան ունեն: Գր. Ղափանցյանի վարկածները տեղանուն-տոհմանունների միմյանցից ծագած լինելու վերաբերյալ հետագայում առավել խորացրել և հիմնավորել են թե՛ պատմաբանները, թե՛ լեզվաբանները, ինչպես հայ, այնպես էլ այլազգի՝ Ջ. Գրեպին, Ի. Դյակոնով, Վ. Բենեցիանու, Ս. Երեմյան, Յ. Կարազյոզյան, Ն. Հարությունյան, Գ. Ջահուկյան:

Ժողովրդանունների տեղանվանական կիրառությունների վերլուծությունը տարբեր ազգերի տեղանվանական համակարգերում երևան է բերում դրանց սերտ կապն այնպիսի պատմաաշխարհագրական իրողությունների հետ, ինչպիսիք են՝ էթնոսի բնակեցման և սփռման ձևը, տվյալ տարածքում առկա էթնիկական շփումների տիպը, հողի սեփականության ու հողօգտագործման տիպերը, տնտեսական գործունեության յուրահատկությունները: Էթնոտեղանունների առաջացումը վաղ հնադարի հետ էր կապված և պայմանավորված էր հողի սեփականության և օգտագործման համայնքային՝ տոհմացեղային հարաբերություններով: Դրանք այն ժամանակներն էին, երբ տեղանքը կոչվում էր այն բնակեցնող ցեղի ընդհանուր անունով: Անվանակոչման այս սկզբունքի տարածվածության և համընդհանուր բնույթի մասին վկայում են հնագույն քարտեզները՝ սկսած Պտղոմեոսի ժամանակներից, ինչպես նաև տարբեր ժողովուրդների մատենագրությունը կամ զանազան արձանագրությունները, որտեղ հիշատակվում էին ռազմական գործողությունների հետևանքով նվաճված տարածքներն ու ազգերը:

Մովսես Խորենացին, այսպիսով, հետևում էր այս ձևավորված ավանդույթին, համաձայն որի՝ երկրի անվանումը պետք է բխի նրա ցեղանուն-տոհմանունից, վերջինս էլ՝ ցեղի առաջատար հերոսների անուններից: Տարածքների և ժողովուրդների անունների նույնականության օրինակներ կարելի է գտնել գրեթե ամենուրեք. այսպես՝ *Ռուս (Русь)* անվանումը թե՛ ռուսական, թե՛ օտար աղբյուրներում կիրառվում է և՛ որպես երկրանուն, և՛ որպես ժողովրդանուն, որը բնավ դյուրին չի դարձնում այս արմատի ստուգաբանությունը⁷: Նույն բնույթի են *Իրան, Էլլադա, Լիտվա, Բրետոն, Յորք, Կորելա, Պերմ, Յուգրա, Պերու, Չիլի* և այլ հազարավոր անվանումներ, որոնք սփռված են բոլոր մայրցամաքներում: Այն բնակավայրերը, որոնք տոհմական տարածքների կենտրոնն էին, ժամանակի ընթացքում հաճախ

⁶ Նույն տեղում, էջ 75:

⁷ Տե՛ս **Поспелов Е. М.** Этнонимы в топонимике // Этническая топонимика. Сборник статей. М., 1987, էջ 6:

վերածվում էին քաղաք-նստանների՝ ժողովրդանուն հիմքով: Պատճառն ինքնին հասկանալի է. նման բնակավայրերի ազգային կազմը միատարր էր, որ տարբերակիչ լավագույն հատկանիշն է անվանադրման համար: Նման կազմությունների հանրահայտ օրինակներ են՝ *Վենետիկ, Դրեզդեն, Լոնդոն, Փարիզ* քաղաքանունները:

Ինչպես վերը նշեցինք, ժողովրդանունները մասնակցում են ոչ միայն երկրանունների, այլև գրեթե բոլոր ֆիզիկաաշխարհագրական միավորների անվանումների կազմությանը՝ ծովերի, կղզիների, թերակղզիների, ծովածոցերի և այլն: Օրինակ՝ Կասպից ծովի, Էրի և Յուրոն լճերի (ԱՄՆ), Պարսից ծոցի (որն ի դեպ կոչվում է նաև Արաբական), Բոսֆոր և Դարդանել նեղուցների, Սիցիլիա կղզու անվանումները բաղադրված են ժողովրդանուններից:

Տարբեր ցեղերով բնակեցված տարածքներում էթնոտեղանունների առաջացումը բացատրվում է ցեղային պատկանելության հատկանիշի տարբերակիչ մեծ դերով: Արեալային քննությունը ցույց է տալիս, որ էթնոտեղանունները տարածվում են անհավասարաչափ, դրանք ավելի հաճախադեպ լինում և պահպանվում են էթնիկական շփումների կենտրոնում, այսինքն՝ ազգամիջյան խաչմերուկներում: Բացարձակ միատարր ազգային բնակության վայրերում էթնոտեղանուններ սովորաբար չեն առաջանում, իսկ եթե առաջանում են, երկար չեն պահպանվում, որովհետև այսպիսի տեղերում ազգային պատկանելությունն արդեն բավարար տարբերակիչ հատկանիշ չէ: Ընդ որում՝ էթնոտեղանունները հաճախ ծագում են բնիկ, հնագույն բնակչության և եկվորների հարաբերությունների զարգացման արդյունքում, դրանք հիմնականում նվաճող – նվաճվող բնույթի են. բնիկներին գալիս են տիրելու, ձուլելու նոր, առավել երիտասարդ, զարգացած կամ մարտունակ ցեղերը, իսկ նվաճվողների կամ ձուլվողների անվանումները երբեմն մնում են որպես տվյալ տարածքի անհետացած հնաբնակների գոյության եզակի ապացույցներ: Այսպես, Ն. Ադոնցը, քննելով Ներքին Ղաթի գավառանունները՝ *Խորձիան/էն, Պաղնատուն, Մուն-ձուր, Դարանադ, Եկելէս/էն, Աղին, Սանադին, Դերջան, Կարին, Շաղգոն, Սպեր*, և նրանցից ածանցված բնականությունների և գետանունների ծագումնաբանությունը, գրում է. «Շաղգոնից բացի մնացած անունները նախահայկական ծագում ունեն: Այդ գավառները, որ հայերը խլեցին հարևան ցեղերից, պահպանեցին իրենց անունները, որոնցից շատերը զուտ *ազգագրական տերմիններ են*: Անվանումների, ինչպես նաև տեղադրության խնդրում դասական հեղինակները համաձայն են հայկական աղբյուրներին»⁸: Բայց սա հարաբերությունների միակ բնույթը չէ, որ նպաստում է էթնոտեղանունների առաջացմանը, նրանք կարող են ծագել նաև խաղաղ գոյակցության տարածքներում: Որսորդ և ձկնորս ցեղերի տարածումն ուղղակի պատճառ է դառնում, որ տարածքի ոչ միայն բնականությունները, այլև գետերի ու լճերի, անտառների, լեռների ու ձորերի անվանումները բաղադրվեն ժողովրդանուններից: Քոչվոր-անասնապահ ցեղերի անունները ևս տեղանվանահիմք դառնալու մեծ ներուժ ունեն, որովհետև անվանակոչման միջոցով քոչվոր ցեղերը յուրովի ամրակայում էին իրենց սեփականության իրավունքը տվյալ տարածքների հանդեպ: Թուրք-թաթարական տարբեր ցեղանունների վկայվածությունը Ռուսաստանի տարածքում

⁸ Ն. Ադոնց, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում. Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Եր., 1987, էջ 66:

ուղղակի երևան է բերում նրանց գաղթի ճանապարհը: Բնակչության բոլոր տիպի տեղաշարժերը՝ խաղաղ կամ ռազմական, իրենց հետքը թողնում են տեղանունների մեջ՝ *Հայկական Կիլիկիա, Հայկական կամ Հայոց ծով, Հայոց ծոց*, այս անվանումներն ուղղակի վկայությունն են Միջերկրական ծովի ափերին հայերի վերահաստատման փորձերի, որոնք մեր պատմաառասպելական ծովից ծով Հայաստանի կայացումն էին՝ նոր պետականությանը, նոր գրական լեզվով, մշակույթով և գիտությամբ:

Պետք է նկատի ունենալ, որ նվաճող ժողովուրդները, տիրելով որոշակի տարածքների, կարող են և՛ պահպանել բնիկ ժողովուրդների անվանումները որպես տեղանվանահիմքեր, և՛ ջնջել՝ դրանք փոխարինելով իրենց ժողովրդանուններով: Ժողովուրդների և լեզուների փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները ընդհանուր լեզվաբանության մեջ բաժանվում են երկու տեսակի՝ փոխներթափանցում (ֆերենցիա) և փոխառություն⁹: Տեղանունների քննության առումով հատկապես կարևոր է փոխներթափանցման երևույթների վերիանումը: Փոխներթափանցումը լեզուների առավել խորքային փոխազդեցությունն է, որն առաջանում է երկլեզվության կամ բազմալեզվության հետևանքով և անպայմանորեն ուղեկցվում է միջէթնիկական ազդեցություններով: Փոխներթափանցումն ունի երկու պատճառ՝ քաղաքական նվաճումը և մերձավոր հարևանությունը կամ համակեցությունը: Փոխներթափանցման դրսևորումներից է խաչավորումն իր երեք ենթատեսակներով՝ մակաշերտ (սուպերստրատ), առշերտ (ադստրատ) և ենթաշերտ (սուբստրատ): Մակաշերտը եկվորների, ի մասնավորի՝ նվաճողների լեզվի ազդեցությունն է տեղացիների լեզվի վրա. այս դեպքում տեղանունների յուրօրինակ փոխանակում է կատարվում, ինչպես օրինակ՝ հայ-թուրքական լեզվական փոխազդեցությունների պարագայում: Մակաշերտային տեղանունները չեն մերվում տվյալ լեզվի տեղանվանական համակարգին, գիտակցվում են իբրև օտար, պարտադրված և քաղաքական իրավիճակի փոփոխությունների պարագայում հետևողականորեն դուրս են մղվում: Այդպես եղավ Հայաստանի պետական ինքնուրույնության գրեթե ողջ ժամանակահատվածում՝ ներառյալ խորհրդային շրջանը, երբ օտարամուտ թուրքական տեղանունները փոխարինվեցին իրենց հնագույն սկզբնաձևերով կամ այդ պահին հայեցի թվացող այլ անուններով կամ բառապատճենումներով:

Առշերտը հարևան լեզուներից մեկի ազդեցությունն է մյուսի վրա խառը բնակության վայրերում: Նման տեղանուններ մեզանում առաջացել են բոլոր ժամանակներում՝ թե՛ պարսկերենի, թե՛ ադրբեջաներենի, թե՛ ռուսերենի ազդեցությամբ, սակայն դրանք դիպվածային բնույթ են կրում: Մեր քննության առարկա նյութի տեսանկյունից շատ ավելի հետաքրքիր է ենթաշերտի ընթացումը: Ենթաշերտը տեղաբնակների լեզվի ազդեցությունն է եկվորների, ի մասնավորի՝ նվաճողների լեզվի վրա. շատ էթնոտեղանուններ բացատրվում են հենց ենթաշերտի միջոցով: Այդ իսկ պատճառով էլ ընդհանուր ենթաշերտի մեջ առանձնացվում է տեղանվանական ենթաշերտը:

Տեղանվանագետ Ռ. Ազեևան այս կապակցությամբ գրում է. «Սուբստրատ եզրույթի կիրառությունը տեղանվանագիտության մեջ ունի խիստ պարզամտիկ բնույթ: Մինչև այժմ բավարար մշակված չեն ենթաշերտային տեղանվանագիտության տեսական խնդիրները, որոնց թվում են, ըստ իս,

⁹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *նշվ. աշխ.*, էջ 12:

հետևյալները. 1) «տեղանվանական ենթաշերտ» հասկացությունը, ենթաշերտը լեզվի մեջ և տեղանուններում, 2) ենթաշերտային տեղանունների առանձնացման սկզբունքները, 3) ենթաշերտային տեղանունների ուսումնասիրության մեթոդները, 4) տվյալ տարածքի տեղանվանական համակարգը և ենթաշերտային տեղանունները, 5) ենթաշերտային տեղանունների տարբերակները, 6) ենթաշերտային տեղանունների բնութագրումը՝ ըստ ծագումնաբանության¹⁰: Ռ. Ազեկան հատկապես կարևորում է այս հիմնախնդիրներից առաջինը՝ ենթաշերտի տեղանվանական ըմբռնումը: Ենթաշերտ ասելով ընդհանուր լեզվաբանության մեջ նկատի ունեն լեզվի այն շերտը, որը ծագել է նախորդ՝ «պարտված» լեզվի ազդեցությամբ, այլ կերպ ասած՝ սուբստրատը «պարտված» լեզվի հետքերն են «հաղթած» լեզվի մեջ:

Տեղանվանագիտական գրականության մեջ ենթաշերտը ավելի լայն՝ լեզուների ցեղակցական բնույթից անկախ ըմբռնում ունի. «Տեղանվանագիտության մեջ ենթաշերտ ասելով հաճախ նկատի ունեն տվյալ տարածքի այն բոլոր բնակիչների տեղանունների լեզուն, որոնք ժամանակային առումով նախորդում են այժմ այդ տարածքում գերակշռող բնակիչներին՝ անկախ այս կամ այն բնակչության լեզուների մերձավոր ցեղակցային բնույթից»¹¹: Այսինքն՝ ցեղակից ժողովուրդների կամ ազգերի տեղանվանական փոխներթափանցումները ևս համարվում են ենթաշերտային, այն դեպքում, երբ լեզվաբանության մեջ անհնար է խոսել ենթաշերտի մասին, երբ խոսքը վերաբերում է քույր լեզուներին:

Այս տեսանկյունից ուշագրավ է ենթաշերտային տեղանուն և մակաշերտային տեղանուն հասկացությունների ներմուծումը, որ կատարել է Ա. Դուլզոնը Սիբիրի տարածքի տեղանուններն ուսումնասիրելիս, և զարգացրել Ռ. Ազեկան: Վերջինս նշում է. «Որևէ տարածքի, ուր հնարավոր է ենթաշերտ, ռուսական տեղանունների վերլուծության ժամանակ պետք է տարբերել *ծագումով ռուսական* և *կիրառությամբ ռուսական* տեղանուններ»¹²: Նման տարբերակումը կիրառելի է ցանկացած վայրի և ցանկացած լեզվի տեղանունների հանդեպ, որտեղ հնարավոր են ենթաշերտային երևույթներ: Այս պարագայում խնդիրը հանգում է տեղանունների տարժամանակյա և համաժամանակյա վերլուծությանը, որովհետև համաժամանակյա քննության տեսանկյունից անհնար է խոսել ենթաշերտի մասին: Մեր համոզմամբ, դեռևս նախորդ դարի սկզբին Ն. Ադոնցը¹³, իսկ 1940-ական թվականներին Գր. Ղափանցյանը հենց այսպիսի տարանջատում են կատարել՝ ուրարտական, նաիրյան, խեթական, խալդական և կովկասյան ցեղերից մեզ անցած տոհմանուն-տեղանունների վերլուծության ժամանակ՝ առանձնացնելով դրանց նախահայկական սկզբնաձևերը կիրառությամբ հայկական ձևերից. ձուլող ժողովուրդը յուրացնում է բնիկների լեզուների բառապաշարը, նրա լեզվում առաջանում են նոր հնչյունական, ձևաբանական, բառակազմական և այլ օրինաչափություններ, որոնք հետագայում բնորոշվում են որպես ենթաշերտային: Ուշագրավ է այս առումով *Ծովիք* տեղանվան ստուգաբանությունը. Ն. Ադոնցը նշում է, որ *Ծովիքը* նույն նախահայկական **Supani**-ն է, որը հայերենին անցել է **u>ժ** հնչյունական ան-

¹⁰ **Агеева Р. А.** Проблемы топонимического субстрата // Этническая топонимика. Сборник статей. М., 1987, с. 14.

¹¹ Նույն տեղում, էջ 15:

¹² Նույն տեղում, էջ 17:

¹³ **Ն. Ադոնց**, նշվ. աշխ., եր., 1987, էջ 413-549:

ցումով, իսկ մեր ք-ն բնիկների լեզվի հոգնակերտն է, այսինքն՝ ունենք ենթաշերտային փոխառյալ արմատ + հայկական հոգանակերտ ձևույթ կառույցը. «Supani անվանումը հարազատորեն պահպանվել է ասորական Sofan-aje ձևի մեջ՝ հավանաբար հնաբնականների հետ ասորիների ավելի մոտիկ ազգակցություն ունենալու հետևանքով: Հայկական և ասորական ձևերը իրապես, այսինքն՝ աշխարհագրական առումով համընկնում են և նշանակում միևնույն երկիրը, որ բնակեցված էր գերազանցապես հայ և ասորի ծագում ունեցող ժողովուրդներով»¹⁴:

Հ. Կարագյոզյանն իր հայտնի «Սեպագիր տեղանուններ» աշխատության մեջ «Առեղծվածային լաբիրինթոս» խորագրով բաժնում զարգացնում է Գր. Ղափանցյանի դիտարկումներից ծագող այն տեսակետը, ըստ որի, պատկերավոր բնորոշմամբ, «երկու սկյուբ ցեղապետից երեք հայ թագավոր» է սերել. Işpaka սկյուբ ցեղապետը հայ մատենագրության մեջ հանդես է գալիս որպես հայ թագավոր Կայակ, իսկ բիսիմական-արամեական աղբյուրներում նշված Şagahe ցեղապետը, որը նույն Işpaka-ն էր՝ ըստ ասորեստանյան աղբյուրների, հայ մատենագրության մեջ դառնում է Սկայորդի (Շագայորդի): Երրորդը Պարտաթուան (Partat'ua) է, որը մեր ավանդական պատմության տվյալների համաձայն, հայ նախարարների մեջ առաջինը արքայական տիտղոս ստացած Պարույրն է: Սրանք ծագմամբ ոչ հայկական անվանումների հայկականացման հետաքրքիր օրինակներ են¹⁵:

Տարբեր ազգերի, ժողովուրդների փորձը ցույց է տալիս, որ աշխարհագրական անունների յուրացումը բնիկների լեզվից կատարվում է արագ և ուղղակի, երբեմն այն կարող է լինել համատարած: Նշենք, որ պատմական Հայաստանի տարածքի որոշ տեղանուններ առ այսօր ծագումով հայկական չեն դիտվում, կամ դրանց հայերենով ստուգաբանության փորձերը համարվում են առասպելական, օրինակ՝ **Գեղամա ծովակ/ծով, Գեղամա լեռներ**, ինչպես նաև **Գեղարքունիք** տեղանունները, որոնք հայկական ժողովրդական ավանդությունը ըստ քերթողահայր Խորենացու կապում է **Գեղամ** նահապետի անվան հետ, Գր. Ղափանցյանը, Ն. Ադոնցը, հետագայում նաև Վ. Ջիհանյանը բացատրում են vel ցեղանվան միջոցով, որը Կուրի և Արաքսի շրջաններում ապրած ցեղ էր, իսկ այդ ցեղանվան բառային իմաստը ենթադրաբար բխեցվում է ուրարտերեն **ueli** «աշխարհագոր, ջրկատ» բառերից¹⁶: Ծագումնաբանորեն այս տեղանունը ուրարտական է, կիրառությամբ՝ հայկական: **Երասխ/Արաքս** գետանունը ևս շատ հայ և օտարազգի պատմաբաններ ու լեզվաբաններ՝ Մ. Նիկոլսկի, Ս. Երենյան, Հ. Կարագյոզյան, փորձում են բխեցնել ուրարտական երկրանունից՝ **Eriahi**, ավելի ստույգ՝ այս բառի հոգնակի հայցական հոլովածակից, որը սկյութական ցեղանունից է առաջացել: Խորենացին մեզ համար մայր դարձած այս գետանվան ծագումը կապում է Արամայիսի թոռան՝ **Երաստի** հետ: Ինչպիսին էլ լինի այս գետանվան ծագումը՝ կիրառությամբ այն հայկական է¹⁷:

¹⁴ Նույն տեղում, էջ 52:

¹⁵ Տե՛ս **3. Կարագեղեան**, Սեպագիր տեղանուններ, Եր., 1998, էջ 273-277:

¹⁶ Տե՛ս **Վ. Գ. Ջիհանյան**, Հայկական լեռնաշխարհի ջրանունները / Հայոց լեզվի պատմության հարցեր, 3, Եր., 1991, էջ 239, **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.1, Եր. 1986, էջ 827:

¹⁷ Տե՛ս **Վ. Գ. Ջիհանյան**, նշվ. աշխ., էջ 242:

Առկա է նաև հակառակ երևույթը, երբ ծագումով հայկական տեղանունը կիրառությամբ դարձել է ուրարտական: Այսպես՝ Գ. Ջահուկյանը, իր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» աշխատության մեջ քննարկելով հայերենի լեզվական տարրը ուրարտական տեղանուններում, հետևյալ զգուշավոր զուգահեռներն է անցկացնում. «Սարդուրիի արձանագրության մեջ հիշատակված է Մալաթիա քաղաքի մերձակայքում գտնված Կարմի «լեռնային երկիրը», հնարավոր է, որ այս անվան մեջ առկա լինի հայկական *քար* (հոգն. ուղղ. *քարինք*, հայց. *քարինս*) բառը, նույնիսկ սրա հոգն. հայց. նախնական ձևը: ... Եթե *գիւղ* (*գեղ-*) բառի *գ* նախահնչյունը *ւ-ի հետուրարտյան շրջանի ձևափոխությունն է (հմմտ. Velikuni > *Գեղա(ր)քունի*) և ուրարտական շրջանում որոշ տարածքներում արդեն արտասանվել է հենց *ց*-ով, ապա թերևս նրա հոգնակի ձևն է պահպանված Giluarani-ի մեջ, որ Գ. Մելիքիշվիլին ... համարում է «ինչ-որ տոհմացեղային անվանում»: Ինչպես հայտնի է, *գիւղ*-ը հանդիպում է *գիւղեան*, *գեղենի*, *գեղաւրայ-ք* (*գեղաւրեք*) հոգնակի-հավաքական ձևերով և Giluarani-ի մեջ կարելի է տեսնել ինչ-որ հավաքական ձև»¹⁸: Այս տեղանվան վերաբերյալ Ղափանցյանի ստուգաբանությունը հետևյալն է. նա *Գեղարքունիք*-ը բխեցնում է Velikuni (Velikuxi)-ի սկզբնաձևից, նշում է, որ այս անունը համընկել է Ժամանակակից Նոր Բայազետի հետ: Սարդուրի Բ-ի տարեգրություններում հիմնգ անգամ հիշատակվում է այս երկիրը. «Ես արշավեցի Վելիկունի երկիր ... մեղայականոք ինձ մոտ եկավ Նիդին՝ Վելիկունիսի երկրի արքան, ցածրացավ, ես հնազանդեցրի նրան և հարկատու դարձրի»: *Վելիկունի* կամ *Վելիկուխի* անունը կա նաև Ռուսա Ա արքայի թողած արձանագրություններում՝ պահպանված Սևանա լճի հարավային ափին: Հայերենում նախապատվությունը տրվում է *-նի* վերջածանցով խալդական ծագում ունեցող *Վելիկունի* ձևին, որն էլ պահպանվել է *Գեղարքունի* բառում: Ղափանցյանի ստուգաբանությամբ՝ *Վելիկ* բառը, որպես այդ շրջանի ցեղի տոհմական անուն, նշանակում է *վել* ցեղի սերնդից: *Վել* ցեղային անունը, ըստ խալդական լեզվի, նշանակել է «ժողովուրդ»: Ղափանցյանը կարծում էր, որ առհասարակ բոլոր ազգերի անունների առաջնային նշանակությունը եղել է «մարդիկ, ժողովուրդ»¹⁹:

Ուշագրավ է նաև *Երևան* տեղանվան բխեցումը *էրիա* - *Eria* ցեղանունից, որը բազմիցս հիշատակված է ուրարտական թագավորների արձանագրություններում. այս ցեղանունը ի սկզբանե եղել է նաև այրական անուն, ավելի ճշգրիտ՝ դյուցազնանուն (էպոնիմ): *Երևան* անվան համար Ղափանցյանն առաջարկում է ենթադրվող հետևյալ փոխակերպումների հնարավոր շղթան՝ *eri(a)+awan*, այսինքն՝ «էրիա երկիր», «էրիա վայր», ապա հայերենին բնորոշ հնչյունական անցումով, երկբարբառների պարզեցմամբ դարձել *ia>ea>e*, որից ուշ շրջանում առաջացել է *Երևան* բառը:

¹⁸ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 444-445:

* Լեզվաբանական գրականության մեջ առկա է ապելատիվ (լատիներեն քերականական տերմին *nomen appellativum*) և օնիմիկ (օնիմ- հատուկ անուն) բառապաշարների հակադրությունը. ապելատիվ կամ հասարակ անունների բառապաշար ներառվում են բոլոր խոսքի մասերը՝ գոյական, ածական, թվական, բայ, մակբայ, կապ, շարկապ, ձայնարկություններ, առկայության դեպքում նաև՝ նրանց քերականական հարացույցները, այսինքն՝ ապելատիվ բառապաշարը լեզվի բառային միավորների ավելի լայն ըմբռնումն է. բառային համակարգ՝ գումարած քերականական թեքում:

¹⁹ Капанян Гр. Историко-лингвистическое значение топонимики Древней Армении, с. 20–23.

Հիշյալ ծագումնաբանության կողմնակիցներն էին նաև Նիկոլսկին, Սանդալյանը²⁰: Այս վարկածի դեպքում դարձյալ գործում է դյուցազնանուն> ժողովրդանուն>տեղանուն անվանադրման բանաձևը²¹: Ծագումով ոչ հայկական կամ նախահայկական տեղանվանահիմքը կիրառությամբ աստիճանաբար դառնում է զուտ հայկական:

Ավելի առաջ անցնելով՝ Ղափանցյանը Երիա/Արիա դիրքային տարբերակների համարժեքությունն է տեսնում, որովհետև e>a անցումը հայերենում վկայված է եղել բոլոր ժամանակներում (Երիզա/Արիզա, Երասխ/Արաքս, Երաստ/Արաստ), ըստ այդմ՝ փաստարկելով մեր տարածքում արիական ցեղերի հնաբնակ լինելը: Նա կիրառում է հայկականացված իրանական ցեղեր արտահայտությունը²², խոսքը հիմնավորելով մեր նախարարական և թագավորական շատ տոհմերի իրանական ծագմամբ:

Ժողովուրդների շփումները և հարաբերությունները զուտ լեզվաբանական հայեցակետից դիտարկելիս պետք է նշել, որ տարածաշրջանային շփումների ժամանակ հաղթող լեզուն սովորաբար փոխառում է ոչ միայն տեղանուններ, այլև նվաճվող լեզվի ընդհանուր կամ ապելատիվ բառապաշարի միավորներ: Ուստի, որպես կանոն, ենթադրվում է, որ եթե տվյալ լեզվում կա տեղանվանական սուբստրատ, ապա պետք է լինի նաև ընդհանուր ապելատիվ սուբստրատ՝ հնչյունական, ձևաբանական, շարահյուսական որոշակի գծեր, որոնք կարող են բացատրվել ձուլված լեզուների ենթաշերտային ազդեցությամբ: Ներկայիս տեղանվանագիտության մեջ, սակայն, միտում կա տեղանվանական սուբստրատը դիտել որպես հարաբերականորեն ավելի անկախ միավոր, որն ուղղակի չի կապվում ընդհանուր լեզվական սուբստրատի հետ. այս տարբերակումը կատարում են՝ ելնելով տեղանունների և բառապաշարի այլ միավորների, հասարակ բառերի՝ հաղորդակցման ընթացքում ունեցած տարբեր գործառույթներից, նրանց կիրառական տարբեր ոլորտներից²³: Տեղանուններն ուղղակի կապված են տեղանքի հետ, որովհետև տարածության մեջ կողմնորոշվելու համար ստեղծված նշաններ են: Նրանք ինչ-որ առումով տվյալ տարածքի բաղկացուցիչ մասն են դառնում և տարածության ու ժամանակի մեջ կարծես սահմանափակված միավորներ են: Լեզվի ոչ հատկանվանագիտական բառաշերտն ավելի շարժունակ է, վերժամանակային և վերտարածքային, ուստի հեշտությամբ փոխազդեցության մեջ է մտնում, արդիականանում մեծ արագությամբ, իսկ տեղանունները պահպանողական են իրենց բնույթով, հետևաբար՝ ավելի արխայիկ: Կարծում ենք, հետաքրքիր արդյունքների կարելի է հասնել տեղանվանական սուբստրատի հարաբերականորեն ճշտված միավորների վերաբերմամբ կիրառելով Մ. Սվոդեշի գլոտտոլոգիոլոգիայի՝ լեզվաժամանակագրության մեթոդը, որը հայ լեզվաբանության մեջ կիրառել է Գ. Ջահուկյանը՝ տարանջատելով հայերենի

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 7-8:

²¹ Ամբողջական լինելու համար նշենք, որ Հ. Կարազյոզյանը փորձում է վերականգնել այս քաղաքանվան բառային ուղղակի իմաստը՝ ելնելով անվանադրման հնդեվրոպական ավանդույթից, ըստ որի՝ *Երեբուն-Երևան* ի սկզբանե նշանակել է «երջանիկ քաղաք», իսկ Մարգարիտ Իսրայելյանը *Երիանե/Էրիա* երկրանվան բառային ուղիղ իմաստը համարում է «հաղթանակ» (տե՛ս **3. Կարագեոզեան**, Սեպագիր տեղանուններ, էջ 81-82):

²² Տե՛ս **Капанцян Гр.** Историко-лингвистическое значение топонимики Древней Армении, էջ 9:

²³ Տե՛ս **Суперанская А. В.** Ономастический континуум // Тюркская ономастика, Алма-Ата, 1984, էջ 5-12:

նախագրային շրջանները, որոշելով մեր լեզվի տարիքը²⁴: Ս. Սվոդեշը տարբեր լեզուների հիմնական բառաֆոնդից առանձնացնում էր որոշակի քանակի բառեր (ի վերջո՝ 100 բառ) և պարզում, թե 1000 տարվա ընթացքում քանի միավոր է դուրս մղվում, քանիսը՝ պահպանվում: Վիճակագրության ընդհանուր պատկերը հետևյալն էր. ընտրանքի 15%-ը դուրս է մղվում, 85%-ը՝ պահպանվում: Ըստ հիմնական բառաֆոնդի պահպանվածության՝ որոշվում է այս կամ այն լեզվի տարիքը, միասնությունից անջատվելու ժամանակը: Ջուտ տեղանվանագիտական ենթաշերտի նմանատիպ գնահատման փորձը կարող է մանրամասներ բացահայտել լեզվի տարիքի և լեզուների միասնության ժամանակի վերաբերյալ: Շեշտենք նաև այն հանգամանքը, որ շատ տեղանվանագետների կարծիքով նվաճված կամ ձուլված ժողովուրդների լեզուների տարրերը կարող են սահմանափակվել զուտ տեղանուններով և մուտք չգործել նվաճող կամ միաձուլող լեզվի ընդհանուր բառապաշար²⁵: Այս առումով տեղանուններում վերականգնվող ժողովրդանուններն ու տոհմանուններն առավել մեծ արժեք են ստանում, որովհետև բացահայտում են առանձին լեզուների կազմավորման և էթնիկ փոխներթափանցումների շատ ավելի վաղնջական շերտեր, քան մնացյալ բառային միավորները: Բացի դրանից, հատկապես ժողովրդանուններից բաղադրված տեղանունները, Ա. Սուպերանսկայայի բնորոշմամբ, կազմում են «օնոմաստիկ կոնտինուումը»՝ հատկանվանական ընդհանրությամբ, այսինքն՝ տեղանունները միավորում են ժամանակներն ու ազգերին՝ վերականգնելով լեզուների գոյության հիմնավոր շրջանը՝ հնդեվրոպական միասնությունից էլ ավելի վաղ ընկած, ուրվագծում են տարբեր լեզվաընտանիքներին պատկանող լեզուների ենթադրյալ ընդհանրությունը: Եթե խնդիրը մասնավորեցնում ենք Հայկական բարձրավանդակի տարածքում, ապա ժողովրդանուններ պարունակող տեղանունների հիման վրա հնարավոր է վերստեղծել այն բազմաթիվ ժողովուրդների ու տոհմերի հարաբերությունների համայնապատկերը, որ գոյություն է ունեցել Քրիստոսի ծննդից 5-6 հազարամյակ առաջ:

НАРИНЕ ДИЛБАРЯН – Субстрат в армянских топонимах. – Топонимы этнического происхождения – это географические названия, в основе которых лежит наименование какого-либо этноса, народа (этнотопоним) или племени, мелкого родоплеменного ответвления (геноним). Образование этнотопонимов связано с использованием этнических наименований в качестве дифференцирующего признака страны, края, иных географических объектов в условиях заселения территории разными племенами. В топонимии всегда наблюдался интерес к этнонимам как основам, образующим географические названия, поскольку этнотопонимы имеют ключевое значение для понимания топонимического субстрата. Появление этнотопонимов относится к глубокой древности и обусловлено общинно-племенным владением земель. В те времена народ и местность его коренного проживания обозначались одним и тем же именем.

Как правило, в древнейших названиях краёв и областей, поселений и близлежащих гидронимов этимологически восстанавливаются имена коренных племён

²⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 15-17:

²⁵ Տե՛ս Բոգալև Ա. Փ. К вопросу о методике историко-лингвистического анализа этнотопонимов / Этническая топонимика, М., 1987, էջ 29-33:

и родов, которые жили на территории исторической Армении в период формирования армянского народа. Возникновение этнотопонимов тесно связано с миграцией народов на Армянском нагорье.

В топонимике каждого ареала важно выявить топонимический субстрат. Под субстратом подразумевают язык топонимии коренного народа данного ареала, который предшествовал населению, ныне доминирующему на этой территории. Топонимический субстрат является частью общезыкового субстрата. В условиях длительного совместного проживания, а также совместной экономической и культурной деятельности ассимилирующий народ усваивает как апеллятивную, так и ономастическую лексику, включая топонимы коренных народов. Из-за своего функционального значения географические названия заимствуются в первую очередь и системно. Топонимы более привязаны к территории, чем апеллятивные слова, они даже переносятся в результате миграции народов, что и произошло с армянскими топонимами после геноцида. Влияние субстрата может выражаться только в топонимии, минуя апеллятивную лексику.

Топонимы, состоящие из этнонимов и образующие топонимический субстрат, создают «ономастический континуум», то есть соединяют времена и народы, воссоздавая картину древнейшего периода существования языков, более архаичный, чем индоевропейская общность. Помимо того, топонимы указывают на более глубокое родство языков, принадлежащих разным семьям, на так называемом ностратическом уровне.

NARINE DILBARYAN – *Substrate in Armenian Place Names.* – Toponymy in ethnonyms is the basics of forming a geographical name: ethnonyms are important to the concept of the toponymic substrate. The appearance of ethnotoponym dates back to antiquity and is caused by community-ownership of tribal land. There were times when the people and their indigenous area of residence were designated by the same name. In the Armenian toponyms, as a rule, the ancient names of territories and regions, villages and nearby hydronyms etymologically restored the names of indigenous tribes and clans that lived in the territory of historic Armenia during the formation of the Armenian people. Ethnotoponym emergence is closely linked to the migration of peoples in the territory of the Armenian highlands.

In the place names of each area it is very important to identify the toponymic substrate. Language substrate toponymii involves indigenous people of this area, who preceded the population now dominating within the same territory, irrespective of the genetic relationship of languages. Toponymic substrate is part of the general linguistic substratum. In a multilingual context, long-term coexistence and economic, cultural joint activity assimilates the people as the appellative and onomastic vocabulary, including place-names of indigenous peoples. Place names are borrowed in the first place and systematically, because of its functional content. Toponyms are more attached to the area than the appellative words; they are even transferred as a result of migration, as it happened with the Armenian toponyms after the 1915 Genocide. The influence of the substrate can be expressed only in toponyms, bypassing the appellative lexicon.

Toponyms, consisting of ethnonyms create "onomastic continuity", i.e. connecting times and people to the Indo-European community, recreating the ancient period of the language which is more archaic, they point to a deeper kinship between languages belonging to different families, on the so-called nostratic level.